2004, ՓԵՏՐՎԱՐ Ա, ԹԻՎ 3 (167)

# Քրիստոնյա Հայաստան

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ
ԿՐՈՆԱԿԱՆ, ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ,
ԼՐԱՏՎԱԿԱՆ ԵՐԿՇԱԲԱԹԱԹԵՐԹ

## ՄԱՄԼՈ ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

### Գարեգին Բ Կաթողիկոսն ընդունեց Հայաստանում Ռումինիայի Հանրապետության դեսպան Նիկոլաե Իորդակեին



Փետրվարի 4-ին Մայր Աթոռ Սբ. Էջմիածնում Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Հայաստանում Ռումինիայի Հանրապետության նորանշանակ դեսպան Նիկոլաե Իորդակեին:

Ողջունելով դեսպանին՝ Վեհափառ Հայրապետն ուրախությամբ նշեց երկու երկրների եւ եկեղեցիների բարեկամական կապերը՝ համոզմամբ, որ նորանշանակ դեսպանը եւս կնպաստի այդ կապերի զորացմանը:

«Ես ներկայացնում եմ Ռումինիայի Հանրապետությունը, սակայն հնարավոր չէ պետությունից անջատ տեսնել եկեղեցին, քանզի ինչպես Հայ, այնպես էլ Ռումին եկեղեցին դարեր շարունակ եղել են նաեւ առաջնորդը իրենց ժողովրդի»,- ասաց պրն. Իորդակեն՝ Նորին Սրբությանը փոխանցելով Ռումին Օրթոդոքս եկեղեցու Հովվապետ Թեոկտիստոս Պատրիարքի ջերմ ողջույնները:

Հանդիպման ընթացքում խոսվեց երկու եկեղեցիների եւ ժողովուրդների միջեւ առկա եղբայրական հարաբերությունների մասին: Նորին Սրբությունն անդրադարձավ Ռումինիա կատարած իր հովվապետական այցին, ինչպես նաեւ Թեոկտիստոս Պատրիարքի հետ իր հանդիպմանը:

### Գարեգին Բ Կաթողիկոսն ընդունեց Հայաստանում Լեհաստանի Հանրապետության դեսպան Վիկտոր Ռոսսին

Փետրվարի 4-ին Մայր Աթոռ Սբ. Էջմիածնում Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Հայաստանում Լեհաստանի Հանրապետության նորանշանակ դեսպան Վիկտոր Ռոսսին:

Զրույցի ընթացքում Նորին Սրբությունն ու պրն. Ռոսսն անդրադարձան նի դեսպանատան հաստատման առնչությամբ եւ վստահություն հայտնեց, որ երկու երկրների միջեւ ամրապնդվող դիվանագիտական հարաբերությունները նպաստելու են երկու երկրների եւ ժողովուրդների բարեկամության զորացմանը:

Հանդիպման ընթացքում խոսվեց նաեւ վերջին տարիներին բազմաթիվ հայերի



հայ-լեհական պատմական կապերին: Պրն. դեսպանը մասնավորապես նշեց այն մեծ ներդրումը, որ 14-րդ դարից ի վեր ունեցել է լեհահայ համայնքը երկրի մշակույթի զարգացման գործում: Վեհափառ Հայրապետն իր հերթին ուրախություն հայտնեց Հայաստանում Լեհաստա-

Լեհաստան ներգաղթի, ինչպես նաեւ նրանց հոգեւոր կյանքի կազմակերպմանն առնչվող խնդիրների շուրջ: Այս առիթով Վեհափառ Հայրապետը նշեց Մայր Աթոռ Սբ. Էջմիածնի միաբան Տ. Դանիել աբեղա Թումանյանի՝ Վարշավայի համալսարանում ուսանելու փաստը:

### Ս. Սարգիս զորավարի տոնին Վեհափառ Հայրապետը հանդիպեց երիտասարդների հետ

Փետրվարի 7-ին՝ երիտասարդների օրհնության օրը, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսը հանդիպեց Արարատյան հայրապետական թեմի, Արագածոտնի թեմի երիտասարդաց միությունների եւ Երեւանի հայորդյաց տների շուրջ 350 սաների հետ: Վեհափառ Հայրապետը ողջունեց երիտասարդներին՝ ուրախություն հայտնելով, որ օրեցօր նոր անդամներ են ներգրավվում Հայ եկեղեցու երիտասարդաց շարժման մեջ:

«Մեր եկեղեցին զորավոր կլինի այնքանով, որքանով մեր երիտասարդությունը զգա եկեղեցու ներկայությունն իր հոգուց ներս, երբ զգա, որ եկեղեցու առաքելությունը նույնացած է իրենց կյանքի առաքելության հետ»,- նշեց Նորին Սրբությունն իր խոսքում: Ամենայն Հայոց Կաթողիկոսն անդրադարձավ նաեւ երիտասարդներին հուզող խնդիրներին ու այն մարտահրավերներին, որոնց առջեւ կանգնած են նրանք:

«Այսօր վտանգի առջեւ է մեր երիտասարդությունը. այդ վտանգն անհավատությունն է, անտարբերությունը հավատքի նկատմամբ, այդ վտանգը զվարճանքի եւ հաճույքի, Քրիստոսի պատվիրանների վրա չխարսխված



կյանքի հրապույրներն են, Արեւմուտքից ներթափանցող նոր արժեքային ընկալումներն են, որոնք որ գալիս են մեր եկեղեցու զավակներին հեռացնելու իրենց հայրերի սուրբ հավատքից ու հայրենական արժեքների ընկալումից»,- ասաց Վեհափառ Հայրապետը:

Նորին Սրբությունը պատասխանեց նաեւ երիտասարդների բազում հարցերին եւ մաղթեց, որ Ս. Սարգիսն ունկնդիր լինի նրանց խնդրանքներին եւ բարեխոսի Բարձրյալն Աստծո առաջ:

Երիտասարդությանն առաջնորդում էին Արագածոտնի թեմում Վեհափառ Հայրապետի ներկայացուցիչ Տ. Թորգոմ աբղ. Տոնիկյանը, Հայորդյաց տների հոգեւոր տեսուչ Տ. Խադ քհն. Ղազարյանը եւ Տ. Տաճատ քհն. Դավիդյանը:

### Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Ռոստովի նահանգապետի գլխավորած պատվիրակությանը

Փետրվարի 11-ին Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Ռուսաստանյան Դաշնության Ռոստովի մարզի նահանգապետ Վլադիմիր Չուբի գլխավորած պատվիրակությանը:

Ողջունելով հյուրերին՝ Նորին Սրբությունն ուրախություն հայտնեց հայ-ռուսական եղբայրական ջերմ հարաբերությունների համար եւ գոհունակությամբ նշեց ռուսաստանաբնակ հայերի նկատմամբ իշխանությունների հոգատար վերաբերմունքը: Այս առիթով Վեհափառ Հայրապետն իր մասնավոր երախտիքը հայտնեց նահանգապետին՝ Ռոստովի հայոց Սբ. Խաչ եկեղեցին հայ համայնքին վերադարձնելու առնչությամբ՝ այն համոզմամբ, որ հոգեւոր կյանքի զորացումով ռոստովահայերն առավել արդյունավետ կկարողանան իրենց ծառայությունը բերել երկրին: Մասնանշելով եկեղեցի-պետություն բարի հարաբերությունները՝ Վեհափառ Հայրապետը ողջունեց ռուս հո-



գեւորականի՝ Ռոստովի եւ Նովոչերկասկի արքեպիսկոպոս Պանտելեիմոնի ներկայությունը պատվիրակության կազմում:

Պրն. Չուբը շնորհակալություն հայտնեց ընդունելության համար: Նահանգապետը կարեւորեց ռուսահայ համայնքի ներդրումը նահանգի զարգացման գործին՝ նշելով, որ այս տարի տոնախմբվելու է հայերի՝ Ռոստովում հաստատման 225-ամյակը:

Հանդիպման ընթացքում Վեհափառ Հայրապետը հյուրերին հայտնեց նաեւ իր ցավակցությունը՝ վերջերս Մոսկվայի մետրոյում կատարված ահաբեկչության առիթով:

Հանդիպմանը ներկա էր Ռուսաստանի եւ Նոր Նախիջեւանի թեմի առաջնորդ Տ. Եզրաս եպս. Ներսիսյանը:

*Տես էջ 2*

## ՄԱՄԼՈ ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

### Գարեգին Բ Կաթողիկոսն ընդունեց Վլադիմիր Պրյախինին



Փետրվարի 5-ին Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց ԵԱՀԿ Երեւանի գրասենյակի նորանշանակ ղեկավար դոկտ. Վլադիմիր Պրյախինին:

Վեհափառ Հայրապետը, ողջունելով պրն. Պրյախինի անդրանիկ այցը Մայր Աթոռ Սբ. Էջմիածին, բարձր գնահատեց ԵԱՀԿ դերը Հայաստանում ժողովրդավարության զարգացման ու առաջընթացի գործում:

Հանդիպման ընթացքում Նորին Սրբությունն ու պրն. Պրյախինն անդրադարձան Հայաստանում խղճի ազատության եւ կրոնական կազմակերպություններին վերաբերող հարցերի: Նորին Սրբությունը մտահոգություն հայտնեց Հայաստան ներթափանցած տարբեր կրոնական կազմակերպությունների կողմից օրենքի ոտնահարման առնչությամբ, երբ նյութական զանազան միջոցներով փորձ է արվում հեռացնել ժողովրդին Մայր եկեղեցուց եւ ճշմարիտ հավատքից:

Զրույցի ընթացքում խոսվեց նաեւ եկեղեցի-պետություն հարաբերություններին, ինչպես նաեւ հոգեւոր դաստիարակությանն առնչվող խնդիրների շուրջ:

### Հայոց բանակի հոգեւոր ծառայության ղեկավարը մասնակցեց հոգեւոր սպասավորների առաջնորդների միջազգային կոնֆերանսին

Փետրվարի 2-6-ը Աթենքում կայացավ աշխարհի շուրջ 40 երկրների զինված ուժերում հոգեւոր սպասավորների առաջնորդների միջազգային 15-րդ կոնֆերանսը: Ամենամյա այս կոնֆերանսի աշխատանքներին արդեն երկրորդ տարին իր մասնակցությունն է բերում նաեւ Հայոց բանակի հոգեւոր ծառայության խորհրդական Տ. Արշեն աբղ. Սանոսյանը:

Կոնֆերանսի օրերին՝ զանազան հանդիպումների ընթացքում, հայր սուրբը նախնական համաձայնություններ է ձեռք բերել Ռուսաստանի, Լիտվայի եւ այլ երկրների հոգեւոր առաջնորդների հետ՝ հետագա համագործակցության վերաբերյալ: Այսօր Հայոց բանակում իբրեւ հոգեւոր սպասավոր ծառայում են շուրջ 26 հոգեւորական, եւ ինչպես հավաստում է հայր Արշենը, այս ծառայությունը բավականաչափ առաջընթաց է արձանագրել մի շարք նախկին ԽՍՀՄ երկրների համեմատ:

Առաջիկայում՝ մայիսի 9-15-ը, Հայոց բանակի հոգեւոր սպասավորները կմասնակցեն նաեւ Գերմանիայում կայանալիք հոգեւոր ծառայողների սեմինարին:

Աթենքում գտնվելու օրերին հայր Արշենը մասնակցել է նաեւ Հունաստանում ՀՀ դեսպանատան նախաձեռնությամբ կազմակերպված՝ Հայոց բանակի 12-րդ տարեդարձին նվիրված հանդիսությանը՝ փոխանցելով ներկաներին Ամենայն Հայոց Հայրապետի օրհնությունը:

### Հոգեհանգստյան արարողություն՝ Մայր Աթոռ Սբ. Էջմիածնում

Վերջին երկու ամիսների ընթացքում Հայաստանյայց Առաքելական Սբ. եկեղեցին հրաժեշտ տվեց չորս արժանավոր սրբազան հայրերի:

Փետրվարի 1-ին Մայր Աթոռ Սբ. Էջմիածնում, հավարտ Սբ. Պատարագի, Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի հանդիսապետությամբ կատարվեց հոգեհանգստյան արարողություն՝ ի հիշատակ նորոգ հանգուցյալ եկեղեցականների՝ Եգիպտոսի թեմի առաջնորդ Տ. Զավեն արք. Չինչինյանի, Երուսաղեմի Սրբոց Հակոբյանց միաբանության անդամ Տ. Կյուրեղ եպս. Գաբիկյանի, Մեծի Տանն Կիլիկիո կաթողիկոսության միաբաններ Տ. Սահակ արք. Այվազյանի եւ Տ. Մեսրոպ արք. Աշճյանի:

*ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍԲ. ԷՋՄԻԱԾՆԻ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ*

### *19 փետրվարի*

#### ՍԲ. ՎԱՐԴԱՆԱՆՑ ՏՈՆ ԱՆՎԱՆԱԿՈՉՈՒԹՅԱՆ ՕՐ ԳԱՐԵԳԻՆ Բ ՀԱՅՐԱՊԵՏԻ

Հայաստանյայց Առաքելական Ս. եկեղեցին դարեր շարունակ մեծ շուքով նշել ու նշում է Վարդանանց տոնը:

Վարդանանց ճակատամարտը մեր կենսագրության ամենափառահեղ էջերից մեկն է, քանզի այդ ճակատամարտը նախ եւ առաջ ուղղված էր մեր հոգեւոր հայրենիքը, մեր տեսակը, մեր հոգեմտավոր լինելությունը դարերի մեջ եւ դարերին վայել պահելուն:

Թեպետ Ավարայրի ճակատամարտում չհաղթեցին հայերը, բայց եւ չպարտվեցին, եւ ճակատամարտը մեր պատմության մեջ գրանցվեց որպես ոգու անընկճելիության հաղթանակ, որպես արժանապատիվ ապրելու հրամայական:

Վարդանանքը ազգային ճշմարիտ ոգու կերտման քաղաքականություն էր, ազգային գաղափարախոսություն: Եվ այդ գաղափարախոսությունը, անգամ պետականության բացակայության պայմաններում, մինչեւ 20-րդ դար փայլուն իրականացրեց Հայաստանյայց Առաքելական Ս. եկեղեցին:

Վարդանանց տոնի հիշատակման օրը նաեւ Ամենայն Հայոց Գարեգին Բ Հայրապետի անվանակոչության օրն է:

Այս օրը մատուցվող Սբ. Պատարագի ավարտին Իջման Սբ. Սեղանի մոտ կատարվում է Հայրապետական մաղթանք:

### *22 փետրվարի*

#### ԲՈՒՆ ԲԱՐԵԿԵՆԴԱՆ

Շաբաթապահքերին (Առաջավորաց, Եղիական, Լուսավորչի, Վարդավառի, Աստվածածնի, Սբ. Խաչի, Վարագա Սբ. Խաչի, Հիսնակաց, Սբ. Հակոբի, Աստվածահայտնության եւ Ծննդյան) նախորդող կիրակին Հայ եկեղեցում կոչվում է Բարեկենդան, որ նշանակում է բարի կենդանություն, այսինքն՝ ուրախ ու խրախճալի օր՝ համեմված ճոխ ու առատ կերակուրներով:

Բարեկենդաններից հատկանշականն ու նշանակալիցը Մեծ պահքին նախորդող կիրակին է՝ Բուն բարեկենդանը:

Բուն բարեկենդանի խորհուրդը մարդկության՝ կորուսյալ դրախտային երջանիկ կյանքի հիշատակումն է՝ «Զփափկութիւն դրախտին եւ զբարեկենդանութիւն օրհնակէ»:

## ՏՅԱՌՆԸՆԴԱՌԱՋ



Հայաստանյայց Առաքելական Ս. եկեղեցին ամեն տարի՝ Տիրոջ հրաշափառ Ծննդից 40 օր հետո, նշում է Տյառնընդառաջը՝ քառասունօրական Փրկչին, ըստ մովսիսական օրենքի, Երուսաղեմի տաճարին ընծայաբերելու օրը:

Ըստ Ղուկասի Ավետարանի՝ Երուսաղեմում Սիմեոն անունով կատարելապես արդար ու աստվածավախ մի մարդ կար, որն ակնկալում էր Իսրայելի մխիթարությունը: Եվ նրան Սուրբ Հոգուց հրամայված էր մահ չունենալ՝ մինչեւ չտեսներ Տիրոջ Օծյալին: Եվ այդ օրը, երբ Հիսուսի ծնողները մանկանը բերեցին տաճար, Սիմեոնն ընդառաջ եկավ, իր գիրկն առավ քառասնօրյա Փրկչին ու ասաց. «Այժմ, ո՛վ Տեր, խաղաղությա՛մբ արձակիր Քո ծառային՝ ըստ Քո խոսքի, որովհետեւ աչքերս տեսան փրկությունը Քո, որ պատրաստեցիր բոլոր ժողովուրդների առաջ, լույս, որ կլինի հայտնություն հեթանոսների համար եւ փառք՝ Իսրայելի Քո ժողովրդի համար»: Մինչ ծնողները զարմացած էին այս խոսքերի համար, ծերունին օրհնեց նաեւ նրանց ու մորը՝ Մարիամին ասաց. «Ահա՛ սա Նա է, որ պատճառ է դառնալու Իսրայելի մեջ շատերի անկման ու բարձրացման եւ նշան՝ հակառակության: Իսկ քո հոգու միջով էլ սուր պիտի անցնի, որպեսզի բազում սրտերի խորհուրդներ հայտնի դառնան» (Բ 29-35):

Տյառնընդառաջի տոնը Տիրոջն ընդառաջ գնալու, մեղավոր մարդկության փրկության համար մարդեղացած Աստծուն խոնարհվելու հրավեր, կոչ է բոլոր հավատացյալներին:

Եվ ահա փետրվարի 13-ին Սբ. Էջմիածնի Մայր տաճարում, Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Հայրապետի հանդիսապետությամբ, կատարվեց երեկոյան ժամերգություն, որից հետո տեղի ունեցավ նախատոնակի արարողությունը, ապա անդաստանի կարգը՝ աշխարհի չորս ծագերի օրհնությունը: Օրհնվեցին նաեւ մոմերը, որոնց կրակով էլ բոցավառվեց Մայր Աթոռ Սբ. Էջմիածնի բակում պատրաստված, Քրիստոսի լույսը խորհրդանշող ավանդական խարույկը:

Փետրվարի 14-ին՝ Տյառնընդառաջի բուն տոնին, մատուցվեց սբ. Պատարագ: Պատարագիչներ Երուսաղեմի Հայոց Պատրիարքության միաբան հոգ. պարետ ծ. վրդ. Երեցյանը:

Պատարագի ավարտին կատարվեց նաեւ նորապսակների օրհնության արարողությունը:

## ԳՐԻԳՈՐ ՎԱՐԴԱՊԵՏ ԽԼԱԹԵՑԻ

# ԶԳՈՒՇՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

***Սուրբ Գրքի խոսքն ու պատվիրանը նրանց, ովքեր այն ժառանգում են՝ գալիք ժամանակների համար:***



Իմ ճանապարհներն ինքնագո խոսքից ու անմատույց լույսից են բաղկացած, եւ իմ նրբանուրբ շավիղները՝ հրաբորբոք ճառագայթասփյուռ ջահով պայծառացած:

Ովքեր հավատով անթերի եք, մտքով դիմեք ինձ:

Ուրախությամբ եկե՛ք իմ լույսի բխման ետեւից, եւ ես ձեզ կտանեմ իմ քաղաքը:

Ցնծությամբ պարե՛ք եւ հրճվանքով մտե՛ք նրա դռներով:

Ընտիր են նրա շինվածքները, եւ շափյուղե՝ պարսպի քարերը նրա:

Նրա վերնաշեն դրանդին զուտ ոսկուց է, ներքնաշենը՝ զմրուխտե ակներից:

Լիբանանից է նրա փայտը, եւ իմ քաղաքի մանուկներն արա՛գ պատրաստվեցին:

Նրա խորանների ցցերը չեն շարժվի:

Մաքուր է նրա ճանապարհը, եւ նրա շավիղը՝ նորոգված:

Գալի՛ս մաքրիր սիրտդ եւ դու կտեսնես իմ քաղաքի փառքը:

Ես լուսո Հոր դուստրն եմ, տեսնում եմ Նրա Ծնունդի ու Բխման դեմքերը եւ ունեմ համարձակություն Նրա հանդեպ՝ ամեն ժամ:

Ովքեր կամենում եք տեսնել Նրան, ձեր բազուկներով բարձրացրե՛ք ինձ եւ մշտապես պահե՛ք ինձ ձեր կրծքի ու սրտի վրա:

Բարձրաձայն ընթերցի՛ր եւ մտքումդ պահի՛ր այն ամենը, ինչ որ սովորում ես ինձանից:

Լույս ընդունիր ինձանից, առանց ամոթի մոտեցի՛ր քո Տիրոջը եւ համարձակորեն շրջի՛ր Նրա անաչառ ու ահագին հրապարակներում:

Արեգակից ու լույսից էլ պայծառ են իմ ղամբարները, եւ ով գալիս է ինձ մոտ, Աստծո աթոռի աջ կողմում նստած կտեսնի ինձ:

Իմ հիմքերը հավասար են անդունդների, եւ իմ գլուխը երկնակամարից էլ բարձր է:

Ես ինձ մոտ եմ պահում բոլոր մարգարեներին, ինձ մոտ են գումարված առաքյալները, անթիվ վարդապետներն ու հայրապետները:

Եկե՛ք ինձ մոտ, Սիոնի՛ մանուկներ՝ Աստծուն սիրողներ եւ Նրա օրենքը ցանկացողներ:

Սովորե՛ք ինձ, առաջնորդնե՛ր ու ժողովուրդներ, եւ ես կտանեմ ձեզ իմ երկնավոր Հոր մոտ: Ինձ մոտ է բնակվում իմ Հայր Աստվածը, եւ ես Նրա Հոգու եւ Որդու հանգստյան քաղաքն եմ: Իմ ճաշիկը շառագույն է, եւ նրա հոտը՝ անճառելի:

Ա՛ռ ինձ քո սրտի հավատի մեջ եւ քո թեւով բարձրացրո՛ւ ինձ:

Քաղցր եմ ես ձեր կոկորդում, եւ համն իմ ախորժելի է ծամելիքներում ձեր, ովքեր հավատով կարողանում եք ճաշակել ինձ:

Ես քո սրտի բանալին եմ, որդյա՛կ իմ, եւ իմ զորությունը շատերի մեջ բավականին է:

Ինձ մի՛ ընծայիր հերձվածողներին, որովհետեւ ես հակառակ եմ թերահավատներին:

Շա՛տ կողբաս, եթե ինձ նրանց տաս, որովհետեւ աղբով ու ժանգով են լցնում ինձ:

Հավասարիմ մարդկանց տուր ինձ, եւ տգետից, որ փնտրում է, մի՛ թաքցրու ինձ:

Իմ դիմաց քեզ գրավակա՛ն ընդունիր նրանց ճշմարիտ հավատը:

Տե՛ս, չմոռանաս իմ սերը:

Քո շուրթերով՝ սիրով համբուրի՛ր ինձ եւ բնակեցրո՛ւ ինձ քո սրտի ու հոգու սենյակներում: Ճարտար իմաստունների՛ն շնորհիր ինձ, որպեսզի իմ լույսի միջոցով պախարակեն հերձվածողներին:

### Ժառանգողի պատասխանը

Վա՛յ ինձ, եթե ես ձրի կամ անխորհրդաբար քեզ տամ թերահավատներին կամ տգետներին, իմ հավա՛ս ու հույս:

Այլ մտքովս հոգուս մեջ, հոգովս շնչիս մեջ, շնչովս արյանս մեջ, արյամբ իմ մարմնիս մեջ եւ մարմնովս կաշվիս մեջ՝ ծրարած պահում եմ քեզ, իմ կինամո՛ն, նարդո՛ս ու սաշխ (թյուրակ, շեր ծառի խեժը, որը նվիրական խնկի չորս բաղադրիչներից մեկն է եւ զմուռսի բոլոր տեսակներից գերազանց):

Եվ երբ հոգիս մարմնիցս բաժանվի, հնարավոր չէ, որ հեռանամ քեզանից, այլ մարմնիս հետ կտանեմ քեզ մահվան գուբը, որ Ահավոր Օրը դու իմ գլուխը պսակես:

*Թարգմ.՝ Ա. Ս.-ի*

# ՄԱՐԴԸ ԵՎ ՀԱՎԵՐԺՈՒԹՅՈՒՆԸ
## Համո Սահյան - 90



Սկիզբը՝ թիվ 2

Օր ծերության Հ. Սահյանին դժվար ժամանակներ բաժին ընկան: Եվ օրհնեց նոր մարդկանց ու նոր կյանքը, եւ հիասթափվեց ու վիրավորվեց խաբված մանկան նման.

*Եկան... Տիրացան ու ավերեցին,*
*Իրենց մեղքերը մեզ չներեցին......*
*Եվ ի՞նչ մնաց մեզ... մրսած մեղկություն,*
*Շապիկը հանած օձի մերկություն...*
*Թող կեցցեն այս նոր նորին մեծություն*
*Վերին պարոնայք Քաջնազարները:*
(«Եվ ինչ մնաց մեզ»)

Վերստին Քաջ Նազարը, վերստին Թումանյանի հայացքի անդրադարձը: Հաջորդում է ավելի խիստ մի դատաստան՝ ինքնադատաստանի ձեւով.

*Ինձ համար ամեն ինչ կորած է,*
*Էլ ոչ ոք եւ ոչինչ ես չունեմ:*
*Ծամում եմ իմ բաժին չոր հացը,*
*Եվ քունս չի տանում, որ քնեմ:*
*...Փոխվել են դերերն ու տեղերը,*
*Բայց նույնն է երախը վիշապի...*
*Որտե՞ղ են այս երկրի տերերը,*
*Աղոթեմ, որ մահս շտապի...*
(«Աղոթեմ»)

Հանրային կյանքի այս վայրիվերումների մեջ ապրելը դժվար է. քաղաքականացված կյանքն ապականում է մարդկային ամեն մի հարաբերություն եւ ամեն ինչ բեւեռացնում՝ կա՛մ յուրային, կա՛մ թշնամի: Արժեքները վերանում են, մնում են միայն պահին ու դիրքին հարմարեցված հարաբերությունները: Ըստ այդմ էլ փոխվում են մարդկային կապերը: Ամեն ոք դառնում է ծրագրված, որ, անկախ ամեն ինչից, նախապես արդեն գիտի, թե ինչ պիտի անի, ում հետ ինչպես վարվի: Մարդն այդ իրականության մեջ աստիճանաբար օտարվում է ինքն իրենից, իր շրջապատից, իր նախկին կապերից: Փոխվում է կյանքը, ավելի վայրագ ու դաժան ձեւեր ընդունում, փոխվում է նաեւ մարդը...

Ի՞նչ պիտի աներ Հ. Սահյանն այս դեպքում. իրեն վերստին նորոգելու եւ վերագտնելու համար նա պիտի վեր կենար եւ տարիների իր փորձին վստահ նորից գնար մայր բնության գիրկը.

*Մթնած մեգ եմ ոտից գլուխ,*
*Բայց այդ մեգը ես չեմ:*
*Այնքան տարվա ճամփորդ եմ հեգ,*
*Բայց այդ հեգը ես չեմ:*
*Շատ եմ փորձում ինձ հանդիպել,*
*Փորձս փորձ է մնում...*
*Հազար մարդ է մեջս նստած,*
*Բայց ոչ մեկը ես չեմ...*
(«Մթնած մեգ եմ...»)

Սահյանի ինքնաօտարումը նրան վանում, կտրում է հանրային կյանքից եւ բնաշխարհի մեջ իրեն բերում ու կանգնեցնում իր իսկ աչքի առաջ՝ որպես բանաստեղծ, որպես ստեղծող, որն «...Ուր լինի, ինչ էլ դառնա, Իմացիր՝ գառն է մատաղիդ» եւ «Ես որքան փախչում եմ ինձանից, Այնքան իմ խորքերն եմ մտնում»: Եվ ազատագրվել ինքդ քեզանից չես կարող:

*Արդեն շատ եմ հոգնել դահլիճներից փարթամ,*
*Քարոզներից տարտամ ու վեճերից:*
*Գնամ քարափներիս լռությունը կարդամ,*
*Վերջին անգամ փորձեմ ճանաչել ինձ:*
(«Արդեն շատ եմ հոգնել...»)

Նույն մոտիվը պահպանելով գրքից գիրք՝ փոխվում է բանաստեղծի տարիքը, ուրեմն՝ նաեւ կենսափորձը: Եվ ամենեւին էլ բանաստեղծի վերադարձի փիլիսոփայությունը նույնը չէ կյանքի սկզբին, կյանքի կեսօրին եւ կյանքի մայրամուտին: Պատկերները նույնն են, բայց տարբեր է վերաբերմունքը: Աշխարհը չի փոխվում, փոխվում է մարդը: Բնությունից՝ չփոխվող աշխարհից, կտրվելն իր կյանքը չապրելու կամ ապրածը կրճատելու պես է:

*Արթնացեք, հուշեր, մի հնար ճարեք,*
*Ազատեք այսքան հոգսից ու ցավից,*
*Իմ այս երկնաքեր ցուրտ քարանձավից*
*Ինձ Տասնա սարի փեշերը տարեք:*
(«Տասնա գետակը»)

Ի վերջո, բնության ու հանրության վեճի եւ հաշտության, հուշի եւ վերհուշի բոլոր անդրադարձները մի արտացոլք ունեն, որի մեջ ինքն է՝ բանաստեղծը: Այս ինքնաօտարումը, որ գրքից գիրք անցնող առանցքային խոհ է, գալիս- հասնում է օր ծերության, բայց վերստին տեսակի ամբողջական նկարագիրը չկա: Ո՞վ եմ ես հարցի պատասխանն այսպիսի դարձերեսներ ունի.

Սա 20-րդ դարն է:

Մի կողմից՝ անդադրում ինքնաորոնում ու ինքնագտնումի մոլեգին ճիգ, մյուս կողմից՝ ինքն իրենից փախչելու, հեռանալու, ինքնաօտարացման կործանարար մի տարերք, որ ըստ ամենայնի դարձել են 20-րդ դարի համաշխարհային գրականության հիմնահարցերը՝ գիտակցության հոսքի եւ գոյափիլիսոփայության ամբողջ գեղագիտությամբ:

Ինքնահաստատման աղերսը դառնում է գերագույն նպատակ: Այս առանցքային միտքը նաեւ Պ. Սեւակի «Եղիցի լույս»-ի ամբողջ գաղափարախոսությունն էր: Դիմելով Տիրոջը՝ բանաստեղծն ասում էր. «Բարեխոսս եղիր իմ եւ ի՜մ միջեւ, Որ բանն ավարտվի ինքնահաստատությամբ <...> Թե չէ ես այսպես ապրել չե՜մ կարող» («Բարեխոսս եղիր իմ եւ իմ միջեւ»): Դիմելով մայր բնությանը՝ Սահյանը փորձում էր իրար բերել իր բեւեռները, որպեսզի ամբողջանար: Նույնն է. այս դեպքում էական չէ, թե ո՞ւմ ես դիմում, էականն այն է, թե ինչո՞ւ ես դիմում եւ ի՞նչ ելք ես տեսնում հոգեկան այդ ճգնաժամից: Սահյանն իր լուծումը գտավ, այսինքն՝ այդ ելքը նա ի սկզբանե գիտեր: Բայց այդ ելքն էլ ելք չէր, որովհետեւ ինքնագտնումի պահին անգամ հոգեկան երկփեղկումը բացվում էր անդունդի պես, իսկ ինքնաօտարումն արդեն իսկ մահ էր՝ ոչնչանալու աստիճանի եւ ոչ թե մի նյութից մեկ այլ նյութի փոխարկվելու ձեւով: Այս ամենը կյանքը դարձնում են հարցականներով լցված լռություն, դրամատիկական լարվածության հասած լռություն, որի մեջ բանաստեղծն է ու բառը:

Ահա այս անընդհատական լռության մեջ է բանաստեղծի կյանքը. իրեն լրիվ գտավ, ճանաչեց՝ կորած է. իրենից լրիվ հեռացավ, մոռացավ՝ կորած է: Ու այդ պահին է, որ վերագտնումը փոխադարձ ձեւեր է ընդունում, եւ դա այնքան բնական, որ թվում է իրական.

*Այստեղ ամեն ինչ ապուպապոտ է,*
*Հորոտ-մորոտ է, մանկությունոտ...*
*Խեղճության հոտ է, խենթության հոտ է,*
*Պարզության հոտ է, մաքրության հոտ:*

*Հողն՝ իմաստուն այր, ես մի բուռ հող եմ,*
*Թող նեկտար բխի իմ ընդերքից...*
*Առուն՝ բանաստեղծ, ես ընթերցող եմ,*
*Եվ չեմ հագենում նրա երգից:*

*Ես ծառի պես եմ, ծիծառի պես եմ,*
*Մամուռի պես եմ, աղբյուրի պես...*
*Ինչ որ տեսնում եք, բոլորը ես եմ,*
*Ես ամեն ինչ եմ, ամեն ինչ՝ ես:*
(«Այստեղ ամեն ինչ...»)

Այսպես գրվում է նաեւ կյանքի վերջը:

Որերորդ անգամ լինելով՝ Սահյանն անդրադառնում է այն, թվում է թե, ավարտված, բայց դեռեւս չմարող բանավեճին, ճշտում այն հարցի պատասխանը, թե ի՞նչ է գտել իր լեռներում: Պատասխանը նույնն է, բայց ոչ թե որպես ասածի կրկնություն, այլ իմաստի լրացում, ըստ որի՝ նա գտել է իր ակունքներն ու տոհմածառի արմատները եւ այդտեղի ամենաջինջ աղբյուրներով կարող է «Լվանալ ու պարզաջրել Ապականված մի ողջ աշխարհ» եւ ապրում է այդ կյանքը. «Ամեն տիտղոս ու պարգեւից, Ամեն դիրքից ամաչելով... Երգ երգելու հրճվանք կոչված Տառապանքին ինձ խաչելով» («Ի՞նչ ես գտել»): Եվ նորից նույնը. «Իմ սար ու ձորից ձեռ չեմ քաշելու...Եվ արձագանքն եմ նրանց լռության... Կածանը՝ տողն իմ կենսագրության» («Իմ սար ու ձորից»):

*Սարեր, ես ձեր երգիչն էի,*
*Ձեր խղճի կանչն ու խիղճն էի...*
*Ես ձոր կիջնեմ, ժամն է էլի,*
*Իսկ դուք երկինք թռեք:*

*Ականջ արեք վերջին անգամ,*
*Մի սպասեք, թե ես կգամ,*
*Ձեր երթի մեջ արդեն չկամ,*
*Ինձ բացակա դրեք:*

*Ինձ որձաքար մի ծանրադիր,*
*Ինձ տապան ու տապանագիր,*
*Հողիս վրա՝ կանաչ-կարմիր*
*Ձեր փեշերը փռեք:*

*Ինչ որ բաժին դարձրի ջրի,*
*Ինչ որ տողեր չդարձրի,*
*Ինչ որ գրել չհասցրի,*
*Իմ փոխարեն գրեք:*
(«Սարեր...»)

Շարունակությունը՝ էջ 7

# ՀԱՅՈՑ ՊԱՀԱՆՋԱՏԻՐՈՒԹՅԱՆ ԱՐՏԱՑՈԼՈՒՄԸ ՀՈԳԵՎՈՐԱԿԱՆՆԵՐԻ ԳՐԱԾ ԴԻՄՈՒՄ-ՆԱՄԱԿՆԵՐՈՒՄ

Հայ ժողովրդի բազմադարյան պատմության հիմնական ակունքներից մեկը Հայաստանյայց Առաքելական եկեղեցին է, որը պետականության չգոյության պայմաններում միշտ էլ ստանձնել է քաղաքական իշխանության գործառնություններ, ուստի ամենեւին էլ պատահական չէ, որ Հայաստանում խորհրդային կարգերի հաստատումից հետո ստեղծված անբարենպաստ պայմաններում անգամ Հայոց եկեղեցու ազգանվեր սպասավորները չմոռացան Հայ Դատը: Դեռեւս 1926 թ. ապրիլի 1-ին՝ Լոզանի կոնֆերանսից ոչ շատ հետո, խորհրդային իշխանությունների կողմից անբարեհույս համարվող Ամերիկայի հայոց թեմի առաջնորդ Տիրայր արքեպիսկոպոսը Գեւորգ Ե Սուրենյանց Կաթողիկոսին գրում էր. **«Միշտ ալ շեշտած ենք որ Ռուսաց մեր երկրի մէջ լինելու պարագան մեր երկրի փրկութեան հիմն է: Գրած ենք Տ. Գարեգին եպիսկոպոսին, որպէսզի մեր կառավարական շրջաններին մէջ խօսէ մեր երկրի սահմաններն ընդլայնելու խնդրի նկատմամբ (դէպի Նախիջեւան, Կարս, Արտահան եւն), որպէսզի գաղթականութեան մուտքն այնտեղ հնարաւորութիւն դառնայ: Անտարբեր եղած չենք եւ չէինք կարող լինիլ մեր սեփական երկրի վերաշինութեան գործի նկատմամբ, վասնզի Հայ եկեղեցւոյ պաշտօնեայ լինելով հանդերձ, հայ մարդ ենք, այդ երկրի զաւակ եւ այդ երկրի շահերուն նուիրուած»** («Վավերագրեր Հայ եկեղեցու պատմության. 1921-1938 թթ.», կազմեց՝ Ս. Բեհբուդյան, Երեւան, 1994, էջ 79): Այսպիսին էր Հայ եկեղեցու սպասավորների հավատամքը:

Երկրորդ աշխարհամարտից անմիջապես հետո Հայ եկեղեցու պաշտոնյաները վերսկսել են փորձերը Թուրքիային անցած հայապատկան երկրամասը Հայաստանին վերադարձնելու ուղղությամբ, մանավանդ որ, ինչպես Ամենայն Հայոց Կաթողիկոս Գեւորգ Զ Չորեքչյանն է գրում, **«այդ իմաստով բազմաթիւ դիմումներ ենք ստացել աշխարհի ամեն կողմը ցրուած հայերի կողմից»** (ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 409, ց. 1, գ. 753, թ. 1): Ներկայացնենք այդ նամակներից ընդամենը մեկը, որը 1945 թ. հուլիսի 22-ին գրել էր նախկին թրքահայ սովետական քաղաքացի Մաղաք Փափազյանը: Նրա նամակում մասնավորապես ասվում է. **«Վեհափառ հայր, ներեցէք եւ թոյլ տվէք հարցնելու, ամեն մի հայի շատ հուզող մի հարց, թե արդյոք Ամենայն Հայոց նորընտիր Կաթողիկոսը՝ Գեւորգ 6-րդը, մտադրություն չունի՞ դիմելու երեք մեծ տերությունների ղեկավարների խորհրդակցության, Թրքահայաստանի տերիտորիաներից Սովետական Հայաստանին միացնելու եւ դրանով Թրքահայաստանի թրքական տեռորից փախած, օտար երկրներում պանդխտության մեջ գտնվող, հայության Հայրենիք՝ Սովետական Հայաստանի վերադարձի հնարավորություն ստեղծելու խնդիրը, երեք մեծ տերությունների ղեկավարների խորհրդակցությունում քննարկության ենթարկելու եւ դրական իմաստով լուծելու համար»** (ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 409, ց. 1, գ. 295, թ. 2):

Էջմիածնում գումարված Ազգային-եկեղեցական ժողովի պատգամավորները 1945 թ. հունիսի 26-ին Թուրքիային անցած հայապատկան հողերը Խորհրդային Հայաստանին վերադարձնելու խնդրանքով դիմում են հղել Ի. Վ. Ստալինին. **«Մեծ Ստալին, դուն պողպատէ վճռականութեամբ իրագործեցիր ուքրանացիներու, բելոռուսներու, մոլդավացիներու եւ բալտիկ ժողովուրդներու ազգային ամբողջացումը,-** գրված է նամակում,- **դուն նաեւ թշնամիի անարգ լուծէն ազատեցիր լեհերը, չեխոսլովաքները, աւստրիացիները, բուլղարները եւ եուկոսլաւները՝ իրաւամբ նուաճելով համայն ազատասէր մարդկութեան սիրտը եւ ժողովուրդներու ազատարարի կոչումը:**

**«Մեծ Ստալին, մենք եւս ձայնակցելով Ամերիկահայ Ազգային Խորհուրդի դեկլարացիային՝ ուղղուած Սան Ֆրանսիսկոյի պատգամաւորներուն եւ մամուլին, մէկ ու կէս միլիոն դժբախտ եւ հայրենազուրկ հայերու անունով կը դիմենք ձեզ-նոյնպէս իրագործել հայ ժողովրդի ազգային ամբողջացումը, կցելով Թրքահայաստանի հողերը Սովետական Հայաստանի երկրամասին եւ կազմակերպելով աստանդական հայերու վերադարձը իրենց մայր երկիրը»** (Գ. Լազեան, Հայաստան եւ Հայ Դատը հայ եւ ռուս յարաբերութիւններու լոյսին տակ, Երեւան, 1991, էջ 349-351):

Նամակը ստորագրել էին Ամենայն Հայոց նորընտիր Կաթողիկոս Գեւորգ Զ Չորեքչյանը, Կիլիկիո Կաթողիկոս Գարեգին Ա-ն, Երուսաղեմի պատրիարք Կյուրեղ Բ Իսրայելյանը, Հունաստանի թեմի առաջնորդ Կարապետ արք. Մազլումյանը,



*Գործ՝ Երվանդ Գոջաբաշյանի*

Եվրոպայի թեմի առաջնորդ Արտավազդ արք. Սյուրմեյանը, Կալիֆոռնիայի թեմի առաջնորդ Մամբրե եպս. Գալֆայանը, Եգիպտոսի թեմի առաջնորդ Մամբրե եպս. Սիրունյանը, Ամերիկայի հայոց առաջնորդ Տիրան ծ. վրդ. Ներսոյանը, Ռումինիայի թեմի առաջնորդական տեղապահ Վազգեն վրդ. Պալճյանը (հետագայում՝ 1955-1994 թթ., Ամենայն Հայոց Կաթողիկոս Վազգեն Ա) եւ այլ ականավոր հոգեւորականներ, ինչպես նաեւ գիտության, գրականության ու արվեստի բազմաթիվ նշանավոր գործիչներ:

Շարունակությունը՝ էջ 7

## ՇԵՆՈՒԴԱ Գ
# ՀԱՄԵՄԱՏԱԿԱՆ ԱՍՏՎԱԾԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ
## Բարեխոսություն

*Սկիզբը՝ էջ 5*

2) **Հրեշտակի բարեխոսությունը Հեսու քահանայապետի համար**: Հրեշտակը կանգնեց սատանայի առաջ, ով պատրաստվում էր Հեսուի դեմ մեղադրանք ներկայացնելու, եւ ասաց նրան. «Թող Տերը սաստի՛ քեզ, սատանա՛, թող սաստի՛ քեզ Տերը, Ով ընտրեց Երուսաղեմը: Մի՞թե սա կրակից հանված մի խանձող չէ» (Զաք. Գ 1-2):

3) Մեկ ուրիշ օրինակ կա «Ծննդոց» գրքում: Տիրոջ հրեշտակը պահպանեց եւ փրկեց Հակոբին: Հակոբը նրա մասին էր խոսում, երբ օրհնում էր Եփրեմին ու Մանասեին. «Հրեշտակը, որ փրկեց ինձ ամեն չարից, թող օրհնի այս մանուկներին» (Ծննդ. ԽԸ 16):

4) Մենք չպիտի մոռանանք հրեշտակների մասին Սուրբ Գրքի ասածը. «Մի՞թե նրանք ամենքը հարկավոր հոգիներ չեն, որ ուղարկվում են սպասավորելու նրանց, ովքեր ժառանգելու են փրկությունը» (Եբր. Ա 14): Սա նշանակում



է, որ նրանք երկրի վրա գործ ունեն կատարելու մարդկանց համար:

### Թ. ՍՐԲԵՐԸ ՀԱՃԵԼԻ ԵՆ ՏԻՐՈՋ ԱՌԱՋ:

1) Մենք սրբերի բարեխոսությունը խնդրում ենք այն պատվի համար, որ նրանք ունեն Աստծո առաջ, Ով սիրում է նրանց եւ հանձնարարում ողորմության գործեր մարդկանց համար, այլեւ որովհետեւ իրենց մարմիններից ազատվելուց հետո նրանց հոգիներն ավելի մեծ գիտություն եւ ավելի ընդարձակ կարողություններ ունեն:

2) Տիրոջ առաջ սրբերի պատվի մասին խոսելիս պետք է նշենք, որ Աստված երբեմն Իր անունը կցում էր նրանց անվանը: Նա ասաց. «Ես եմ քո հոր Աստվածը՝ Աբրահամի Աստվածը, Իսահակի Աստվածը եւ Հակոբի Աստվածը» (Ելք Գ 6):

3) Այդ է պատճառը, որ սրբերը սովորություն ունեին հիշեցնելու Տիրոջը Իր սրբերի մասին, որպեսզի Նրա գթած ու ողորմած սիրտն իսկույն շարժվեր՝ լսելով նրանց անուններն ու հիշելով Իր խոստումները նրանց: Իսրայելի ժողովրդին կորստից փրկելու համար բարեխոսելիս Մովսես մարգարեն ասաց Տիրոջը. «Հիշի՛ր Քո ծառաներ Աբրահամին, Իսահակին ու Հակոբին, որոնց Դու երդվեցիր Քո անձով, խոսեցիր նրանց հետ եւ ասացիր. «Կբազմացնեմ ձեր զավակներին, ինչպես երկնքի աստղերը» (Ելք ԼԲ 13):

4) Կարելի է հիշել, որ երբ Ասորիների արքա Ազայելը նեղում էր իսրայելացիներին, ինչպես ասում է Սուրբ Գիրքը, «Տերը ողորմեց ու գթաց նրանց եւ նայեց նրանց վրա Աբրահամի, Իսահակի եւ Հակոբի հետ Իր կնքած ուխտի պատճառով եւ չկամեցավ Տերն ապականել նրանց, չհեռացրեց նրանց Իր երեսից» (Դ Թագ. ԺԳ 23):

5) Այս նյութի մասին խոսելիս կարելի է ներկայացնել Ահարոնի ու Մարիամի հանդեպ Աստծո կիրառած հանդիմանության օրինակը, երբ նրանք քննադատեցին Մովսեսին: Տերն ամպի սյունով իջավ եւ ասաց Ահարոնին ու Մարիամին Մովսեսի առաջ. «Լսե՛ք Իմ խոսքերը: Եթե ձեր մեջ մարգարե լինի Տիրոջ համար, նրան կերեւամ տեսիլքով եւ երազի միջոցով կխոսեմ նրա հետ, ո՛չ այնպես, ինչպես Իմ ծառա Մովսեսի հետ, ով Իմ ամբողջ տան մեջ հավատարիմ է: Նրա հետ երես առ երես կխոսեմ, կերպարանքով եւ ոչ թե նմանությամբ: Եվ նա Տիրոջ փառքը տեսավ: Ուրեմն ինչո՞ւ չվախեցաք եւ Իմ ծառա Մովսեսին բամբասեցիք» (Թվեր ԺԲ 6-8):

6) Տիրոջ առաջ սրբերի պատվի մի ուրիշ օրինակ են Տիրոջ հետեւյալ խոսքերն Իր առաքյալներին. «Ով ձեզ է լսում, Ինձ է լսում, ով ձեզ է անարգում, Ինձ է անարգում» (Ղուկ. Ժ 16), եւ՝ «եթե մեկը ծառայի Ինձ, Իմ Հայրը կպատվի նրան» (Հովհ. ԺԲ 26):

*Շարունակելի*

*Թարգմանությունը՝*
*Սեդա ՍՏԱՄԲՈԼՑՅԱՆԻ*

# ԱՇԽԱՐՀԸ ԵՎ ԵԿԵՂԵՑԻՆ

### ՀՌՈՄԻ ՊԱՊՆ ԱՆՀԱՆԳՍՏԱՑԱԾ Է ԶԼՄ-ՆԵՐՈՒՄ ՎԱՐԴԱՊԵՏԱԿԱՆ ԲՆՈՒՅԹԻ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ԱՂԱՎԱՂՄԱՆ ՀԱՄԱՐ

ԶԼՄ-ների հետ հանդիպման ժամանակ Հռոմի Պապն իր անհանգստությունն է հայտնել, որ նրանք աղավաղում են եկեղեցու ուսուցումներին վերաբերող փաստաթղթերը, եւ այդ պատճառով հավատացյալներն ավելի շատ ապատեղեկացվում են, քան տեղեկացվում: Սրբազան Քահանայապետը համոզված է, որ անհրաժեշտ է մեթոդներ մշակել ԶԼՄ-ներով եկեղեցական այս կամ այն փաստաթուղթը ճիշտ լուսաբանելու համար: Նա նաեւ ընդգծել է, որ նմանատիպ փաստաթղթերը հոգեւորականները պետք է ընդունեն «որպես մի ուսուցում, որը նպաստում է քրիստոնեական գիտակցության ձեւավորմանը հավատացյալների մեջ, որոնք կանգնած են արդի աշխարհի մարտահրավերների առաջ»:

### ՍԵՆՏ ԼՅՈՒԻՍԻ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍԸ ԱՄՆ ՆԱԽԱԳԱՀԻ ԹԵԿՆԱԾՈՒԻՆ ՉԻ ԹՈՒՅԼԱՏՐԻ ՀԱՂՈՐԴՈՒԹՅՈՒՆ ՍՏԱՆԱԼ

Սենտ Լյուիսի նորընտիր Ռայմոնդ Բյորք արքեպիսկոպոսը պնդում է, որ օրենսդիր-կաթոլիկները, ովքեր կողմնակից են աբորտին, չպետք է հաղորդվեն: Նա նշել է, որ չի թույլատրի ԱՄՆ նախագահի թեկնածու դեմոկրատ սենատոր Ջոն Քերիին հաղորդվել, քանզի վերջինս հայտնի է որպես աբորտի օրինականացման պաշտպան: Ի պատասխան՝ Ջոն Քերին հայտարարել է. «Ես շատ հարգում եմ եկեղեցին, բայց կարծում եմ, որ եկեղեցին չպետք է ցուցումներ տա քաղաքական գործիչներին»:

### ԲՈԼՈՐ ՔՐԻՍՏՈՆՅԱՆԵՐՆ ԱՅՍ ՏԱՐԻ ԶԱՏԻԿԸ ԿՏՈՆԵՆ ՆՈՒՅՆ ՕՐԸ

Այս տարի ողջ քրիստոնեական աշխարհը Քրիստոսի հրաշափառ հարությունը կտոնի նույն օրը՝ ապրիլի 11-ին: Վերջին անգամ նման բան եղել է 2001 թ.: Այդ տարի Հռոմի Պապն առաջարկել էր 21-րդ դարում Ս. Հարության տոնը նշել միասնաբար, սակայն նրա առաջարկը չընդունվեց: Ավելի վաղ՝ 1965 թ., Վատիկանի Բ ժողովն էր նման կոչով հանդես եկել՝ առաջարկելով քրիստոնեական այդ մեծագույն տոնը նշել ապրիլ ամսվա երկրորդ կիրակի օրը: Հաջորդ անգամ ուղղափառները, կաթոլիկները եւ բողոքականները Ս. Հարության տոնը միասին կնշեն 2007 թ., 2010 թ., 2011 թ., 2014 թ., 2017 թ. եւ այսպես շարունակ:

### ՎԱՏԻԿԱՆ ՊԵՏՈՒԹՅՈՒՆԸ 75 ՏԱՐԵԿԱՆ Է

1929 թ. փետրվարի 11-ին Լատերանի համաձայնագրով հռչակվեց Վատիկան պետության ստեղծումը, որը ստորագրեցին Իտալիայի Վիկտոր Էմմանուել Գ թագավորի ներկայացուցիչ վարչապետ Բենիտո Մուսոլինին եւ Պիոս ԺԱ Պապի քարտուղար կարդինալ Պիետրո Գասպարին: Այդ ժամանակ հաստատվեց նաեւ Վատիկանի երկգույն՝ դեղին եւ սպիտակ նոր դրոշը: Վատիկանի զինանշանի վրա պատկերված են խաչաձեւված երկու բանալի (դրախտի եւ Հռոմի)՝ պապական տիարայի (պսակաթագ, խույր) ներքո:

### ԻՏԱԼԻԱՅՈՒՄ ՄԻԱՆՁՆՈՒՀԻՆԵՐԸ ՔԱՐՈԶՈՒՄ ԵՆ ՊՈՌՆԻԿՆԵՐԻ ՇՐՋԱՆՈՒՄ

Իտալիայի միանձնուհիները դուրս են գալիս գիշերը եւ շրջում փողոցներում՝ իրենց հոգեւոր եւ բարոյական օգնությունն առաջարկելով Իտալիայում աշխատող օտարազգի պոռնիկներին: Միանձնուհիներն իրենց կրոնական հագուստներով քարոզում են փողոցում ապրուստ վաստակող պոռնիկներին եւ ուղիներ առաջարկում այդ ամոթալի մասնագիտությունից ձերբազատվելու համար: Նրանք նաեւ հոգեբանորեն են օգնում եւ սովորեցնում, թե ինչպես ազատվել կախվածություններից եւ նորմալ կյանք սկսել: Այսօր այդ աշխատանքներում ներգրավված են 27 միանձնուհի: Ըստ վիճակագրական տվյալների՝ Իտալիայի փողոցներում աշխատում են մոտ 70.000 պոռնիկ: «Մեր նպատակն է, առաջին հերթին, օգնել այդ կանանց՝ գիտակցելու իրենց մարդկային արժանապատվությունը, հասկանալու, որ հենց իրենք պետք է պաշտպանեն իրենց մարմինը»,- նշել է միանձնուհիներից մեկը:

### ԿԱՆԱՆՑ ՔԱՀԱՆԱՅԱԳՈՐԾԵԼԸ ԿԱՐՈՂ Է ԴԱՌՆԱԼ ԱՆԳԼԻԿԱՆ ԵԿԵՂԵՑՈՒ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՃԳՆԱԺԱՄԻ ՊԱՏՃԱՌ

Անգլիկան եկեղեցում կանանց քահանա ձեռնադրելու մասին 10 տարի առաջ ընդունված որոշման պատճառով եկեղեցին ծախսել է 48 մլն. դոլար: Այդքան գումար է վճարվել որպես փոխհատուցում այն քահանաներին, ովքեր ի նշան բողոքի՝ այս նորամուծության պատճառով լքեցին Անգլիկան եկեղեցին: 1992 թ. ընդունված որոշմամբ՝ կանանց քահանայագործելու պատճառով թոշակի անցած քահանաները հսկայական գումարներ ստացան: Շուրջ 600 հոգեւորական են թողել իրենց համայնքներն այդ պատճառով, նրանց մի մասն այսօր ծառայում է ուղղափառ եւ կաթոլիկ եկեղեցիներում: «Առաջընթաց հավատքի մեջ» պահպանողական միության առաջնորդ Ստիվեն Պարկինսոնն այդ մասին ասել է. «Կանանց քահանայագործելու պատճառով եկեղեցին հսկայական գումարներ եւ տաղանդավոր քահանաներ կորցրեց, իսկ եկեղեցուց հեռացած աշխարհականների թիվն անկարելի է հաշվել»:

### ԵՐՈՒՍԱՂԵՄՈՒՄ ԹԱՔՑՆՈՒՄ ԵՆ ԵՐԿՐՈՐԴ ՏԱՃԱՐԻ ԳՈՅՈՒԹՅԱՆ ՓԱՍՏԸ

Իսրայելացի լրագրող Իոսի Մալշինը՝ որպես պաղեստինցի, մտել է Ալ Աքսա մզկիթ եւ լուսանկարել Երկրորդ Տաճարից մնացած պատի քարերը, որոնք էլ հրեա հնագետների համար դարձել են եւս մեկ ապացույց, որ մահմեդականները կանոնավոր կերպով ոչնչացնում են Երկրորդ Տաճարից մնացած վկայությունները: Հրեաները համոզված են, որ այդ մզկիթի տեղում եղել է Երկրորդ Տաճարը, իսկ մահմեդականները պնդում են, որ այնտեղ տաճար երբեք չի եղել: Լրագրողը պնդում է, որ իր տեսած քարերի վրա որթատունկի զարդանախշեր կան: Իսկ դա բնորոշ է Երկրորդ Տաճարին, որը քանդվեց հռոմեացիների կողմից մ. թ. 70 թ.-ին:

### ԿԱԹՈԼԻԿ ԱՎԱՆԴԱՊԱՀՆԵՐՆ ԷԿՈՒՄԵՆԻԶՄԻ ՀԱՄԱՐ ՔՆՆԱԴԱՏՈՒՄ ԵՆ ՎԱՏԻԿԱՆԻՆ

Կաթոլիկ-ավանդապահների «Ս. Պիոս Ժ Պապ» միության եպիսկոպոս Բեռնառ Ֆելլեն պնդում է, որ Կաթոլիկ եկեղեցին ճգնաժամ է ապրում: Ըստ նրա՝ Վատիկանի Բ ժողովից հետո Կաթոլիկ եկեղեցու որդեգրած էկումենիկ կուրսը ճիշտ չէ: Նա 47 էջանոց նամակ է ուղարկել մի քանի կարդինալների: Փաստաթղթում ասված է, որ Հովհաննես Պողոս Բ-ի որդեգրած էկումենիկ դիրքորոշումը նշանակում է Կաթոլիկ եկեղեցու «նույնականության կորուստ», քանզի դրանով Կաթոլիկ եկեղեցին հավասարվում է քրիստոնեական մյուս հարանվանություններին: «Էկումենիզմը Սուրբ քաղաքը վերածել է ավերակի»,- գրում է նա: Եպիսկոպոսը նաեւ սուր քննադատում է քրիստոնեական միությանն աջակցող Պապական խորհրդի նախագահ կարդինալ Վալտեր Կասպերի գործունեությունը, որն ըստ նրա՝ «Լյութերից ավելի վատն է», քանզի այսօրվա կաթոլիկության համար միությունն ավելի կարեւոր է, քան մարդկանց հոգիների փրկությունը: Բեռնառ Ֆելլեն այն 4 հոգեւորականներից է, որոնք չնայած Վատիկանի արգելքին՝ ձեռնադրվեցին Մարսել Լեֆեւր արքեպիսկոպոսի կողմից: Արդյունքում վերջինս եւ իր հետեւորդները եկեղեցուց դուրս համարվեցին: Պաշտոնական Վատիկանը, 2000 թ. սկսած, բանակցում է ավանդապահ սխիզմատիկների հետ, սակայն դեռ լուրջ արդյունքների չի հասել:



### ՄԱՍՍԱՉՈՒՍԵԹՍԻ ԴԱՏԱՐԱՆԸ ՀԱՍՏԱՏԵԼ Է ՍՈԴՈՄԱԿԱՆՆԵՐԻ ԱՄՈՒՍՆԱՆԱԼՈՒ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ

Մասսաչուսեթսի նահանգի գերագույն դատարանը որոշել է, որ արվամոլները կարող են ամուսնանալ: Այդ նահանգում միասեռական եւ նորմալ ամուսնությունները դրվել են նույն նժարին: Մնացած բոլոր նահանգներում արգելված է միասեռականների ամուսնությունը: ԱՄՆ-ի բազում արվամոլական կազմակերպություններ ողջունել են այդ որոշումը, սակայն Սպիտակ Տունը դատապարտել է դա, իսկ երկրի նախագահը բազմիցս նշել է, որ պետք է պահպանել սուրբ ամուսնության ինստիտուտը՝ դրա տակ հասկանալով միայն «մեկ տղամարդու եւ մեկ կնոջ միությունը»:

### ԳՈՒՑԵ ՀԻՍՈՒՍԻՆ ԵՐԿՐՊԱԳԵԼՈՒ ԵԿԱԾ ՄՈԳԵՐԸ ԿԱՆԱ՞ՅՔ ԷԻՆ

Անգլիկան եկեղեցու պաշտոնյաներն այն եզրակացությանն են հանգել, որ իրենց նոր աղոթագրքում չպետք է օգտագործել «երեք իմաստուն այր» արտահայտությունը: Մատթեոսի Ավետարանում ասվում է, որ Հիսուսի ծննդից հետո երեք իմաստուն այր Արեւելքից Երուսաղեմ եկան, որպեսզի երկրպագեն Մանկանն ու իրենց նվերները հանձնեն: Հունարեն հին ձեռագրերում այս մասում օգտագործվում է «մոգեր» բառը, որն անգլերենում թարգմանված է «իմաստուն այրեր» արտահայտությամբ: «The Washington Times»-ը հայտնում է, որ Անգլիկան եկեղեցու նոր աղոթագրքի խմբագրման համար ստեղծված հանձնաժողովի անդամները գտնում են, որ ակնհայտ վկայություն չկա, որ Մանկանը երկրպագելու եկածները տղամարդ էին, ուստի «այրեր» բառը պետք է փոխարինել «մոգեր»-ով: Բացառված չէ, որ նրանք կանայք էին: Որոշվել է միջին դիրք ընդունել եւ օգտագործել «մոգեր» բառը: Հանձնաժողովի անդամները նաեւ նշում են, որ այս փոփոխությունը կապված չէ ֆեմինիզմի ջատագովության հետ, այլ այն առավելապես ճշգրտման նպատակ է հետապնդում:

*Լրաքաղը՝*
*Տիգրան սրկ. ԲԱՂՈՒՄՅԱՆԻ*

**ՔՐԻՍՏՈՆՅԱ ՀԱՅԱՍՏԱՆ**

Կրոնական, մշակութային, լրատվական երկշաբաթաթերթ

**Հիմնադիր՝**
Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին

**Հրատարակիչ՝**
Ս. Էջմիածնի Քրիստոնեական դաստիարակության կենտրոն

**Գլխավոր խմբագիր՝**
Աստղիկ Ստամբոլցյան

**Գրանցման վկայական՝ 624**
**Խմբագրության հասցեն՝**
ք. Վաղարշապատ, ՔԴԿ

**Հեռախոս՝**
**(0+31) 56780, 54510**
Մայր Աթոռ Ս. Էջմիածնի տպարան
Ստոր. է տպագր. 16. 1. 2004թ.

**Տպաքանակը՝ 2500**
**Գինը՝ 50 դրամ**